

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐԻ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**ԺԲ.00.02 «Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական,
ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք,
պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ասենսխոսության**

Մեղմագիր

Երևան 2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АЛЕКСАНИЯ МАЙЯ ГРИГОРЬЕВНА

**СООТНОШЕНИЕ ПОЛНОМОЧИЙ НАДГОСУДАРСТВЕННЫХ
ОРГАНОВ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА И ГОСУДАРСТВ-ЧЛЕНОВ
ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА
В УГОЛОВНО-ПРАВОВОЙ СФЕРЕ**

Автореферат

**Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.02- “Публичное право-конституционное,
административное, финансовое, муниципальное, экологическое, европейское
право, государственное управление”**

Ереван 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-ռուսական (սլավոնական)
պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ֆ.Պ. ԹՈՒՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
իրավ. գիտ. թեկնածու
Ա.Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ «Հայաստանում ֆրանսիական
համալսարան» հիմնադրամ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. նոյեմբերի
9-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի
իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Ալեք
Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալ-
սարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012 թ. հոկտեմբերի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ

Тема диссертации утверждена
в Российско-Армянском (Славянском) университете

Научный руководитель: кандидат юридических наук,
доцент Ф.П. ТОХЯН

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор Г.Г. АРУТЮНЯН
кандидат юридических наук
А.Г. САРГСЯН

Ведущая организация: Фонд «Французский университет в Армении»

Защита состоится 9-го ноября 2012 г., в 14⁰⁰ часов на заседании специали-
зированной совета ВАК-а 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 9-ого октября 2012 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

А.Г. ВАГАРШЯН

Starting from the beginning of its emergence harmonization as a process of laying down common supranational norms and rules that are uniform for all Member States of the European Union, has been implemented in the economic sphere. Based on the latest developments of the case-law of the Court of Justice of the European Union harmonization began to cover also criminal law field.

In the conclusion the author analyses the role and significance of the harmonization of the field of EU criminal law for the Republic of Armenia as a participant of the European Neighbourhood Policy (ENP) offered to neighbouring countries of the European Union. This question is of high importance as currently the cooperation between the European Union and the Republic of Armenia within the framework of “Eastern Partnership” provides for the free trade regime. Nevertheless, the aforementioned programmes do not establish cooperation in criminal matters between European Union and the Republic of Armenia, which raises serious dangers for Armenia in the context of criminal law area. As the rights of free movement, giving rise to abuses, contributed to the inflow of serious types of crimes from one Member State to another, there is a risk that the new criminal policy of EU that strengthens fight against crime on the supranational level, may lead to the inflow of dangerous types of criminal activities from EU Member States to the Republic of Armenia.

For the purpose of considering the problem concerned, the author recommends to bring the legislation of the Republic of Armenia into compliance with (approximation) the legal acts of the European Union, which regulate the transfer and protection of information used for the purpose of combating crime. The author also recommends to conclude co-operation agreements with supranational EU bodies operating in the criminal law field, such as EUROPOL (European Police Office) and EUROJUST (European Judicial Cooperation Unit) that play a significant role in the active fight against crime throughout the European Union.

The Eurojust ensures the fight against serious crime by facilitating the optimal coordination of action for investigations and prosecutions covering the territory of more than one Member State, whereas the Europol seeks to achieve a safer Europe for the benefit of all EU citizens by supporting EU law enforcement authorities through the exchange and analysis of criminal intelligence.

In the light of EU integration processes, as well as co-operation between Armenia and the European Union within the framework of European Neighbourhood Policy (ENP), the author makes recommendations on the main directions of development of the policy of Armenia in the field of combating crime, bringing forward the necessity of large legislative amendments and relevant co-operation with the supranational bodies of the European Union, aimed at fighting against crime jointly through appropriate reception of European law.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում արագորեն տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներն ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Մի կողմից պետությունների ակտիվ մասնակցությունը միջազգային հարաբերություններին առաջընթացի և զարգացման նոր հնարավորություններ է ընձեռում, սակայն մյուս կողմից, պետությունները կանգնում են նոր հիմնախնդիրների առաջ: Տնտեսական ինտեգրացիան, որը Եվրոպական միությունում (այսուհետ՝ նաև ԵՄ) աննախադեպ հնարավորություններ ստեղծեց ԵՄ անդամ պետությունների համար, դրան զուգահեռ անողորակիորեն հանգեցրեց հանցավորության աճին ամբողջ Եվրոպական միությունում: Ստեղծված իրավիճակում առաջացավ անդամ պետությունների կողմից հանցավորության դեմ առավել արդյունավետ և համատեղ պայքարելու անհրաժեշտություն: Այդ իսկ պատճառով էլ, հանցավորության դեմ պայքարի ոչ բավարար քաղաքականությունն առանձին վերցրած անդամ պետություններում ստիպեց մշակել հանցավորության դեմ համատեղ պայքարի մեխանիզմներ արդեն վերպետական մակարդակում: Սակայն հանցավորության դեմ պայքարի վերպետական մեխանիզմների առկայությունը վիճարկելի է այն առումով, որ քրեաիրավական ոլորտը, սկսած Եվրոպական միության ձևավորման սկզբնական ժամանակաշրջանից, չի գտնվել ԵՄ իրավունքի գործողության ոլորտում: Զրեաիրավական հիմնախնդիրներն իրենց կարգավորումը գտել են ԵՄ անդամ պետությունների միջկառավարական համագործակցության հարթությունում: Դա է պատճառը, որ Եվրոպական միության իրավասությունների¹ առկայությունը քրեաիրավական ոլորտում պատմականորեն խնդրահարույց է եղել:

Այնուամենայնիվ, նախադեպային իրավունքի՝ վերջին տարիների զարգացումները և 2007թ. Լիսաբոնի պայմանագրով նախատեսված փոփոխությունները աստիճանաբար փոխել են քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը, ինչն էլ արմատապես վերափոխել է տասնամյակների ընթացքում կարծրացած մոտեցումները քրեաիրավական ոլորտի կարգավորման վերաբերյալ: Ավելին, քրեաիրավական նոր քաղաքականության շրջանակներում սկիզբ է առել քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի գործընթացը: Այդ իսկ պատճառով էլ քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցության հարցերը գտնվում են Եվրոպական իրավունքի տեսության բանավեճային հիմնահարցերի շարքում, ինչը վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

¹ Մինչև 2007թ. կարգավորվող հարաբերությունների մասով «Եվրոպական միության իրավասություն» հասկացության ներքո սույն աշխատության շրջանակներում նկատի է ունեցվում Եվրոպական տնտեսական համայնքի կամ, այլ կերպ ասած՝ Եվրոպական համայնքի վերպետական մարմինների իրավասությունը՝ ԵՄ Պայմանագրի Է(Ա) հոդվածին համապատասխան, քանի որ միայն 2007թ. Լիսաբոնի պայմանագրի I գլխի 1-ին հոդվածի ուժով վերացվեց Եվրոպական տնտեսական համայնքը, և Եվրոպական միությունը դարձավ դրա իրավահաջորդը:

THE PROPORTION OF COMPETENCES OF THE EUROPEAN UNION AND MEMBER STATES THEREOF IN THE FIELD OF CRIMINAL LAW

SUMMARY

The thesis concerned addresses the issue of proportion of competences of the European Union and Member States thereof in the field of criminal law in the light of new integration processes. The aim of this work is to analyse the changes in the proportion of competences of the European Union and EU Member States in the field of criminal law and relevant consequences thereof, to reveal the principles laid down under the case-law of the Court of Justice of the European Union, which certify such changes.

As a general rule the European Union has never been vested with competences in the field of criminal law. Starting from the beginning of establishment of the European Union, the EU Member States were engaged in the solution of issues of economic integration. Only as a result of developments in case-law of the Court of Justice of the European Union, the proportion of competences of the European Union and the Member States thereof was altered in the field of criminal law.

In the framework of first chapter the author has examined the historical and legal characteristics of the development of the field of criminal law in the European Union. The rights of free movement, giving rise to various abuses, contributed to the increase of crime throughout the European Union, which made the EU Member States cooperate with each other in the field of criminal law as well, but now at the supranational level.

Under the second chapter the author has analysed the extent of competences of the European Union in the field of criminal law. Mutual relation is found between the supranational law of the European Union and the national laws of EU Member States. The European Union Law has impact on the national criminal law and vice versa, the examination whereof has given opportunity to prove the existence of EU competences in the criminal law field. Moreover, the author has considered the criminal law competences under the case-law of the Court of Justice of the European Union. Two cases have been found crucial which assert the existence of EU competences in the field of criminal law.

Based on the latest developments in the field of EU criminal law, the consequences of such developments have been examined under the third chapter, which lead to harmonization as a process of supranational regulation of the field of EU criminal law.

Ներկայումս ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիան լուրջ խնդիր է ոչ միայն ԵՄ անդամ պետությունների շրջանակներում, այլ նաև բոլոր այն երրորդ երկրներում, որոնք օրենքով համագործակցության նոր ձևեր են հաստատում Եվրոպական միության հետ:

Ընդգրկվելով «Եվրոպական հարևանության քաղաքականություն» (ԵՀՔ) ծրագրի մեջ՝ Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ նաև ՀՀ) ԵՄ-ի հետ հաստատել է համագործակցության նոր եզրեր քրեաիրավական հիմնախնդիրների առնչությամբ, որոնց շրջանակներում առավել քան արդիական են դառնում իրավական նոր զարգացումների, մասնավորապես՝ ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի որոշիչ դերը դրանց արդյունավետ լուծման հարցում:

ԵՀՔ իրագործման 2012-2013թթ. Միջոցառումների ցանկի նախագծում և 2011-2013թթ. Հայաստանի Ազգային ինդիկատիվ ծրագրում նախատեսված է ԵՄ-ՀՀ համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում, որի իրագործման նպատակով աշխատանքում ուսումնասիրության են ենթարկվել Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցության հարցում քրեաիրավական ոլորտը հարմոնիզացնող՝ Եվրոպական միության արդարադատության դատարանի (այսուհետ՝ Արդարադատության դատարան) նախադեպային իրավունքը և ԵՄ հիմնադիր պայմանագրերն ու վերպետական կարգավորման այլ ակտեր: Նման ուսումնասիրությունը արժեքավոր է Հայաստանի Հանրապետության համար ոչ միայն «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի իրագործման, այլ նաև Եվրոպական միության հետ համաձայնեցված «Արևելյան գործընկերություն» նոր ծրագրի կենսագործման համար, որոնք «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրում ընդգրկված երկրների համար նախատեսում են համագործակցություն նաև հանցավորության դեմ պայքարի հարցերում: Այդ պայմաններում արդիական է դառնում ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի ազդեցությունը ՀՀ իրավական դաշտի վրա ոչ միայն ԵՄ-ՀՀ համագործակցության արդյունավետ իրականացման, այլ նաև այդպիսի համագործակցության հետագա կատարելագործման համար՝ ԵՄ վերպետական մակարդակում տեղի ունեցող քրեաիրավական զարգացումներին համահունչ:

Ավելին, ՀՀ Կառավարության 2008-2012թթ. Գործունեության միջոցառումների ծրագիրը որպես Կառավարության գործունեության առանձին ուղղություն է նախատեսում միջազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը: Իսկ, 2011թ. ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագիրը կազմակերպված հանցավորության դեմ պայքարի խնդիրների շարքում նախատեսում է նաև օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների հետ համագործակցության ակտիվացումը: Ուստի, աշխատության մեջ բարձրացված հարցերը հետաքրքրություն են ներկայացնում նաև հանցավորության դեմ պայքարի բնագավառում եվրոպական մոտեցումների ընդօրինակմամբ ՀՀ ներպետական քաղաքականությունը զարգացնելու առումով:

гармонизации, как процесса наднационального регулирования уголовной сферы государств-членов ЕС.

Начиная с момента своего возникновения, гармонизация, как процесс установления всеобщих наднациональных норм и правил, единых для всех государств-членов ЕС, осуществлялось в экономической сфере. На основе развитий прецедентного права Суда Юстиции Европейского Союза, гармонизация стала распространяться также на уголовно-правовую сферу.

В заключении автор анализирует роль и значение гармонизации уголовной сферы ЕС для Республики Армения, как участника Политики Европейского Соседства, предложенной соседним странам. Этому вопросу придается большое значение, поскольку в настоящее время сотрудничество между Европейским Союзом и Республикой Армения в рамках новой программы “Восточного партнерства” предусматривается установление режима свободной торговли. Однако, в рамках этих программ не предусматривается уголовно-правовое сотрудничество между Европейским Союзом и Республикой Армения, что грозит серьезной опасностью для Республики Армения в контексте уголовно-правового пространства. Поскольку в Европейском Союзе злоупотребления правами свободного передвижения способствовали проникновению опасных видов преступной деятельности из одного государства-члена в другое, возникло опасение, что новая уголовная политика ЕС усиливающая борьбу с преступностью на наднациональном уровне, может привести к проникновению опасных видов преступной деятельности из государств-членов ЕС в Республику Армения.

Для рассмотрения этой проблемы, автором рекомендуется привести в соответствие (аппроксимация) законодательство Республики Армения с правовыми актами ЕС, регулирующие передачу и охрану информации, используемую в целях борьбы с преступностью. Автором также рекомендуется заключить с договоры сотрудничества с наднациональными уголовно-правовыми органами Европейского Союза, такими как Европол (Офис Европейской Полиции) и Евроджаст (Орган Европейского Судебного Сотрудничества), которые играют значительную роль в активной борьбе с преступностью во всем Европейском Союзе.

В свете интеграционных процессов ЕС, а также сотрудничества между Арменией и Европейским Союзом в рамках Политики Европейского Соседства, автор делает выводы о направлениях развития политики Армении в области борьбы с преступностью, выдвигая необходимость больших законодательных изменений и определенного сотрудничества с наднациональными органами Европейского Союза, направленными на совместимую борьбу с преступностью путем соответствующей рецепции Европейского права.

Հիշյալ հանգամանքները պայմանավորում են ատենախոսության ընտրված թեմայի արդիականությունը ոչ միայն տեսության մակարդակով, այլ նաև պրակտիկայում, մասնավորապես՝ «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի իրագործման կապակցությամբ ԵՄ հարուստ փորձն ընդօրինակելու, վերլուծական մակարդակով հարմոնիզացվող քրեաիրավական ոլորտում եվրոպական մոտեցումներին համահունչ օրենսդրություն մշակելու հարցում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերլուծել քրեաիրավական ոլորտում ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը, ինչպես նաև այդպիսի հարաբերակցության վրա հիմնված հարմոնիզացիան և դրա ազդեցությունը Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի վրա: Դա հնարավորություն կտա վեր հանել քրեաիրավական հարցերով ԵՄ-ՀՀ համագործակցությունից բխող հիմնախնդիրները և մշակել այդպիսի համագործակցության կատարելագործման մեխանիզմները տվյալ բնագավառի նոր զարգացումներին համահունչ:

Առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

-բացահայտել եվրոպական իրավունքի և ազգային քրեական իրավունքի փոխհարաբերությունը Արդարադատության դատարանի մախադեպային իրավունքով հաստատված հիմնարար դրույթների լույսի ներքո, որոնց ուժով քրեաիրավական ոլորտում արձանագրվել է ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցության փոփոխություն,

-ուսումնասիրել քրեաիրավական ոլորտի վերլուծական կարգավորման արդյունքում սկիզբ առած հարմոնիզացիայի գործընթացը, մասնավորապես՝ Լիսաբոնի պայմանագրի փոփոխությունների, ինչպես նաև վերլուծական քրեաիրավական նոր քաղաքականության լույսի ներքո, որոնց ուժով քրեաիրավական ոլորտի կարգավորումը փոխադրվել է ԵՄ վերլուծական մակարդակ,

-դիտարկել ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի նշանակությունը և հնարավոր հետևանքները ԵՄ-ՀՀ փոխհարաբերությունների համատեքստում՝ հաշվի առնելով ՀՀ միջազգային հարուստ փորձը քննարկվող հիմնախնդիրների առնչությամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը ԵՄ քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունն է: Ընդ որում, ատենախոսության մեջ քրեաիրավական ոլորտը դիտարկվել է ոչ թե որպես իրավունքի ճյուղ իրավունքի դասական ընկալման իմաստով, այլ որպես առանձին բնագավառ, հարթություն որտեղ հարաբերվում են Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունները: Ավելին, ատենախոսության շրջանակներում քրեաիրավական ոլորտը դիտարկվել է նեղ իմաստով՝ միայն անդրսահմանային (միջսահմանային) կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կտրվածքով՝ հիմք ընդունելով Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցությունը հանցավորության դեմ պայքարի համատեքստում:

СООТНОШЕНИЕ ПОЛНОМОЧИЙ НАДНАЦИОНАЛЬНЫХ ОРГАНОВ
ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА И ГОСУДАРСТВ-ЧЛЕНОВ ЕВРОПЕЙСКОГО
СОЮЗА В УГОЛОВНО-ПРАВОВОЙ СФЕРЕ

РЕЗЮМЕ

В диссертационной работе исследован вопрос о соотношении полномочий Европейского Союза (ЕС) и государств-членов ЕС в уголовно-правовой сфере в свете новых интеграционных процессов. Цель работы—проанализировать изменение соотношения полномочий Европейского Союза и государств-членов ЕС в уголовно-правовой сфере и соответственные последствия, выявить принципы, установленные прецедентным правом Суда Юстиции Европейского Союза, которые свидетельствуют о таком изменении.

Согласно общему правилу Европейский Союз никогда не был наделен полномочиями в уголовно-правовой сфере. Начиная с первоначальных времен формирования Европейского Союза, государства-члены ЕС были заняты вопросами экономической интеграции. Только в последствии развития прецедентного права Суда Юстиции Европейского Союза, поменялось соотношение полномочий Европейского Союза и государств-членов ЕС в уголовно-правовой сфере.

В первой главе автором рассмотрены историко-правовые особенности развития уголовно-правовой сферы в Европейском Союзе. Права свободного передвижения, давая место злоупотреблениям, способствовали росту преступности во всем Европейском Союзе, что и заставило государств-членов Европейского Союза сотрудничать также в уголовно-правовой сфере, но уже на наднациональном уровне.

Во второй главе автором изучены пределы полномочий Европейского Союза в уголовно-правовой сфере. Существует взаимная связь между наднациональным правом Европейского Союза и национальным уголовным правом государств-членов ЕС. Право Европейского Союза имеет воздействие на национальное уголовное право и наоборот, рассмотрение чего дало возможность подтвердить наличие полномочий Европейского Союза в уголовно-правовой сфере. Более того, автором рассмотрены уголовно-правовые полномочия в свете прецедентного права Суда Юстиции Европейского Союза. Решающую роль сыграли два судебных дела, которые свидетельствуют о наличии полномочий ЕС в уголовно-правовой сфере.

В третьей главе, основываясь на последние тенденции развития в уголовно-правовой сфере ЕС, рассматриваются последствия таких развитий, приводящих к

Հետազոտության առարկան են կազմում ԵՄ քրեաիրավական ոլորտի կարգավորումը 1992թ. Մասստրիխտի և 1997թ. Ամստերդամի պայմանագրերի ընդունումից առաջ և դրանից հետո, ԵՄ իրավունքի և ազգային քրեական իրավունքի փոխհարաբերության առանձնահատկությունները, քրեաիրավական ոլորտում ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցության փոփոխության հիմնահարցը, ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի բարդ գործընթացը և դրա դրսևորումները Լիսաբոնի պայմանագրի լույսի ներքո, ԵՄ քրեաիրավական ոլորտի ազդեցությունը Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի վրա:

Ատենախոսության տեսական հիմքը: Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունից բխող հիմնախնդիրների վերաբերյալ տեսակետներ առաջադրելու և հայեցակարգեր մշակելու համար հիմք են ծառայել ինչպես հայրենական, այնպես էլ արևմտյան տեսաբանների գիտական աշխատությունները, մեկնաբանությունները և առանձին գիտական ուսումնասիրությունները: Ատենախոսությունը հիմնված է հայրենական իրավագիտության մեջ հայտնի գիտնականներ Ֆ.Պ. Թոխյանի, Ա.Շ. Հարությունյանի, Գ.Գ. Հարությունյանի, Ա.Գ. Դազիսյանի, Վ.Հ. Հովհաննիսյանի և այլոց աշխատությունների վրա: Ատենախոսության շրջանակներում համակողմանի հետազոտության են ենթարկվել եվրոպական իրավունքի տեսության մեջ հայտնի գիտնականներ Ս.Յու. Կաշկիևի, Լ.Մ. Էնտինի, Յու.Վ. Տիխոնովի, Մ. Արախի, Ե.Ն. Տրիկոպի, Պ.Ա. Կալինիչենկոյի, Ա.Յա. Կապուստինի, Լ.Ա. Օկունկովի, Փ. Քրեզի, Ս. Փիրսի, Զ. Բերնարդի, Գ. դե Բուրբալի, Ժ. Մոնարի, Փ.Ջ. Զուիջիերի, Ռ. Մորգանի, Մ. Գեյմաս-Մարթի, Գ. Օ'Քիլիֆեի, Փ. Թվոմեի, Մ. Յորգի, Զ. Հարդինգի, Վ. Ռեսսի, Ե. Հեյլին-Քեռնելի, Ջ.Վ. Բրիջի, Վ. Վեսելսի, Հ.Գ. Սիվենսթերի և այլոց աշխատությունները: Հեղինակի կողմից լայն ուսումնասիրության առարկա են դարձել արտասահմանյան մեծածավալ գրականություն, այդ թվում՝ գիտական հոդվածներ, մեկնաբանություններ, գիտական հետազոտության արդյունքներ այնպիսի ճանաչված իրավաբանական ամսագրերում, ինչպիսիք են՝ “European Law Journal”-ը, “European Journal of Law Reform”-ը, “Common Market Law Review”-ն, “European Law Review”-ն և այլն:

Ատենախոսության նորմատիվ հիմքը: Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, օրենքները, ՀՀ Կառավարության և Ազգային ժողովի որոշումները, ՀՀ Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ՀՀ միջազգային համաձայնագրերն ու փոխըմբռնման հուշագրերը: Հետազոտության նորմատիվ հիմքը համալրված է նաև տարբեր միջազգային կառույցների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական համայնքների կոմիսիաներով, Եվրոպական միության ակտերով ու փաստաթղթերով, որոնք ներառում են ԵՄ հիմնադիր պայմանագրեր, հրահանգներ (դիրեկտիվներ), շրջանակային որոշումներ, համատեղ գործողություններ, Եվրոպական հանձնաժողովի Հաղորդագրություններ, կանաչ փաստաթուղթ, ԵՄ համաձայնագրեր, ինչպես նաև Արդարադատության դատարանի նախադեպերի մեծ ժողովածու: Ատենախոսության նորմատիվ հիմքում ընդգրկվել են նաև

յուն» ծրագրի, «Արևելյան գործընկերություն» նոր ծրագրի կենսագործմանը, այլ նաև ՀՀ ներպետական քաղաքականության զարգացմանը հանցավորության դեմ պայքարի հարցերով, այսինքն՝ ՀՀ Կառավարության 2008-2012թթ. Գործունեության միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացմանը:

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հանցավորության դեմ պայքարի համագործակցությունը կատարելագործելու նպատակով առաջարկվում են հետևյալ լուծումները.

1. ՀՀ օրենսդրական դաշտը մոտարկել (համապատասխանեցնել) եվրոպականին, մասնավորապես՝

ա) ՀՀ օրենքի մակարդակով նախատեսել հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության ու փորձի փոխանակումը ՀՀ ազգային մարմինների և ԵՄ համապատասխան վերպետական կառույցների հետ:

բ) Որպես հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման երաշխիք՝ ՀՀ օրենքի մակարդակով սահմանել այդպիսի տեղեկատվության պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում ու միջազգային կառույցներում:

2. Հայաստանի Հանրապետության կողմից ընդօրինակել ԵՄ անդամակցության ճանապարհին գտնվող Խորվաթիայի Հանրապետության փորձը, մասնավորապես՝

ա) Հայաստանի Հանրապետության կողմից համագործակցության համաձայնագիր կնքել ԵՎՐՈՊՈՒԼ-ի (Եվրոպական ոստիկանության գրասենյակ) հետ:

բ) Հայաստանի Հանրապետության կողմից համագործակցության համաձայնագիր կնքել ԵՎՐՈ.ՋԱՍԹ-ի (Եվրոպական դատական համագործակցության մարմին) հետ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում՝

1. Եվրոպական միության ընդհանուր քաղաքականությունը քրեաիրավական ոլորտում // Օրենք և իրականություն, N 7(153), Երևան, 2008թ., 11-12 էջեր:
2. Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները Եվրոպայի հարևանության քաղաքականության շրջանակներում // ԿԱՆԹԵՂ գիտական հոդվածների ժողովածու, No 1(38), Երևան, 2009թ., 161-165 էջեր:
3. Եվրոպական միության քրեական արդարադատությունը 2007թ. Լիսաբոնի պայմանագրի ներքո // Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարանի Գիտական հոդվածների ժողովածու, Երրորդ տարեկան գիտաժողով, Երևան, 2009թ., 542-549 էջեր:
4. Եվրոպական միության իրավասությունները քրեաիրավական ոլորտում // Օրենք և իրականություն, N 9 (179), Երևան, 2010թ., 27-28 էջեր:
5. Եվրոմիության քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի ազդեցությունը ՀՀ իրավական համակարգի վրա // Օրենք և իրականություն, N 4(186), Երևան, 2011թ., 19-21 էջեր:

ԵՄ-ՀՀ վերպետական համագործակցության ակտեր, այդ թվում՝ «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի կենսագործման փաստաթղթերը, «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և սպազա Ասոցիացման համաձայնագիրը:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Քրեաիրավական ոլորտի կարգավորումը Եվրոպական միությունում, ընկած լինելով քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի հիմքում, լայն հետազոտության առարկա է, մասնավորապես, արևմտյան իրավաբանական գրականության մեջ: Այս տեսանկյունից հատկապես արժեքավոր ներդրում ունեն եվրոպական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչների համապատասխան աշխատությունները, որոնք արձագանքելով այդ բնագավառում տեղի ունեցող եվրոպական ինտեգրացիոն գործընթացների պահանջներին, նպաստել են եվրոպական իրավունքի դոկտրինալ զարգացմանը: Այդպիսի գիտական աշխատությունների սակավաթիվ լինելու պատճառն այն է, որ քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունները հետազոտության են ենթարկվել փոքրաթիվ հեղինակների կողմից՝ հաշվի առնելով քրեաիրավական ոլորտի վերպետական կարգավորումների բացակայության վերաբերյալ՝ տարիներ շարունակ գերիշխող տեսակետները: Հետևաբար, այս ոլորտում մշակվել են բազմաթիվ հոդվածներ, կատարվել են առանձին հետազոտություններ, սակայն ամբողջական և համընդհանուր ուսումնական ձեռնարկներ դեռևս չեն կազմվել:

Կատարված ուսումնասիրություններում բարձրացված հարցերն առանցքային նշանակություն են ունեցել՝ արևմտյան տեսաբանների կողմից շոշափվող վիճահարույց հիմնախնդիրներն ատենախոսության շրջանակներում համակողմանի հետազոտության ենթարկելու համար: Դիտարկվել են, հատկապես՝ քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության իրավասությունների վերաբերյալ հայտնի տեսաբաններ՝ Մ. Դելմաս-Մարթիի, Ք. Հարդինգի, Հ.Գ. Սիվենսթերի, Ջ.Վ. Բրիջի և այլոց աշխատությունները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրության են ենթարկվել նաև Եվրոպական միությունում քրեաիրավական ոլորտի վերպետական կարգավորմանը, այսինքն՝ հարմոնիզացիային նվիրված տեսությունների հեղինակներ՝ Ժ. Մոնարի, Ռ. Մորգանի, Փ-Ս. Մյուլլեր-Գրաֆֆի, Դ. Օ'Բրիֆեի և այլոց գիտական աշխատությունները:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել են քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների վերաբերյալ Արդարադատության դատարանի համապատասխան վճիռներ, ինչպես նաև այդ վճիռների վերաբերյալ առանձին իրավագետների մեկնաբանություններ:

Չնայած այն հանգամանքին, որ քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների վերաբերյալ առկա է արտասահմանյան մեծածավալ իրավաբանական գրականություն, այնուամենայնիվ, ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը հրատարակված աղբյուրներում ուսումնասիրության չի ենթարկվել:

Տվյալ խնդրի առնչությամբ որոշ մակերեսային հետազոտություններ հանդիպում են հայտնի տեսաբաններ՝ Ս. Փիրսի, Փ.Ջ. Քուիչփերի, Մ. Վասմեյերի, Ն. Թվեյտեյի և այլոց հրապարակումներում: Ավելին, ԵՄ-ն դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի լուսի ներքո հետադարձաբան առարկա չի դարձվել նաև հայրենական իրավաբանական գրականության մեջ:

Ատենախոսության ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության ընթացքում օգտագործվել են ընդհանուր մեթոդներ՝ ինդուկցիա, դեդուկցիա և հատուկ մեթոդներ՝ պատմական, համակարգային վերլուծության, ինչպես նաև՝ իրավական համեմատական մեթոդը, որը մնացած մեթոդների հետ համակցության մեջ հնարավորություն է տվել ցույց տալու քրեաիրավական ոլորտում ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցության և դրա հիման վրա սկիզբ առած հարմոնիզացիայի հետևանքների առանձնահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքում ուսումնասիրվել և վերլուծվել են ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը քրեաիրավական ոլորտում: Այդպիսի հարաբերակցության փոփոխությունը հիմնավորվել է Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի՝ վերջին տարիների զարգացումներով, 2007թ. Լիսաբոնի պայմանագրով նախատեսված փոփոխություններով և ԵՄ վերապետական մակարդակում ձևավորվող քրեաիրավական նոր քաղաքականությանը:

Քրեաիրավական ոլորտը տասնամյակներ շարունակ կարգավորվել է ԵՄ անդամ պետությունների միջկառավարական համագործակցության մակարդակում և երկար ժամանակ չի դիտարկվել որպես Եվրոպական միության իրավասությունների ոլորտ: Շրջադարձային նշանակություն են ունեցել միայն երկու դատական նախադեպեր (թիվ C-176/03 և թիվ 440/05), որոնցում Արդարադատության դատարանի կատարած արժեքավոր մեկնաբանությունները լուսաբանելով՝ ատենախոսության մեջ հիմնավորվում է քրեաիրավական ոլորտի կարգավորման փոխադրումը անդամ պետությունների ազգային մակարդակից Եվրոպական միության վերապետական մակարդակ՝ ընդառաջ գնալով հարմոնիզացիայի գործընթացին: Այս կապակցությամբ աշխատանքում ուսումնասիրվել է ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի ազդեցությունը ՀՀ իրավական դաշտի վրա՝ ԵՄ-ՀՀ համագործակցության համատեքստում: «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագիրը, «Արևելյան գործընկերություն» նոր ծրագիրը և ապագա Ասոցիացման համաձայնագիրը սահմանում են միայն տնտեսական համագործակցություն Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև: Դրանցով, սակայն, չի հաստատվել քրեաիրավական համագործակցություն Հայաստանի Հանրապետության և ԵՄ վերապետական կառույցների միջև, որով անտեսվում են այն լուրջ վտանգները, որոնք սպառնում են Հայաստանի Հանրապետությանը: Եվրոպական միությունում ազատ տեղաշարժի իրավունքների վերապահմամբ ներքին սահմաններում վերացվել է սահմանային հսկողությունը, արդյունքում մարդկանց, ապրանքների, ծառայությունների և կապիտալի տեղաշար-

է քրեաիրավական կարգավորումների փոխանցումը անդամ պետությունների հարթությունից ԵՄ վերապետական հարթություն:

6. Հարմոնիզացիան (ներդաշնակեցումը)՝ որպես Եվրոպական միության բոլոր անդամ պետությունների համար միասնական վերապետական կարգավորումներ սահմանող գործընթաց, ի լրումն տնտեսական ոլորտի, սկսել է իրականացվել նաև քրեաիրավական ոլորտում, քանի որ հանցավորությունը կտրուկ աճել է ամբողջ Եվրոպական միությունում, և առաջացել է դրա դեմ վերապետական մակարդակով պայքարելու անհրաժեշտություն:

7. ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի աստիճանը բարձրացել է հատկապես Լիսաբոնի պայմանագրով կատարված փոփոխությունների արդյունքում: Այդ տեսանկյունից արդիականություն է ձեռք բերել ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի ազդեցությունը երրորդ երկրներից՝ ՀՀ իրավական դաշտի վրա: Քանի որ «Երոպական հարևանության քաղաքականություն» ծրագրով, ինչպես նաև «Արևելյան գործընկերություն» նոր ծրագրով խորը անդրադարձ չի կատարվում Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև քրեաիրավական համագործակցությանը, ուստի առաջացել է կազմակերպված հանցավորության՝ Եվրոպական միությունից Հայաստանի Հանրապետություն ներթափանցելու վտանգ:

8. Հանցավորության դեմ պայքարի մասով Հայաստանը դեռևս չի հասել ցանկալի արդյունքների ԵՄ-ի հետ փոխհարաբերություններում, ուստի անհրաժեշտություն է առաջացել բարձրացնել ԵՄ-ՀՀ համագործակցության մակարդակը քրեաիրավական հարցերում՝ ՀՀ իրավական դաշտը եվրոպականին մոտարկելու, լավագույն փորձն ընդօրինակելու և հանցավորության դեմ պայքարի ԵՄ վերապետական կառույցների հետ համագործակցելու միջոցով:

9. Հայաստանի հարուստ միջազգային փորձի, մասնավորապես՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների հետ կնքված համաձայնագրերի և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցավորության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման ու պաշտպանության համակարգերն են, որոնց բացակայությունը ՀՀ օրենսդրության մեջ լուրջ թերություն է:

10. ՀՀ միջազգային պրակտիկայի վերլուծությունից բխում է նաև, որ հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման ու պաշտպանության համակարգերի արդյունավետ գործունեության երաշխիքը, ինչը նույնպես բացակայում է ՀՀ օրենսդրության մեջ, սերտ համագործակցություն հաստատելն է տվյալ բնագավառի համապատասխան մարմինների հետ, որոնք տվյալ պարագայում հանցավորության դեմ պայքարի վերապետական կառույցներն են Եվրոպական միությունում:

11. Հայաստանի կողմից հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման ու պաշտպանության համակարգերի ներդրումը Եվրոպական միության օրինակով և համագործակցության հաստատումը ԵՄ վերապետական կառույցների հետ կնպաստեն ոչ միայն ԵՄ-ՀՀ համագործակցության արդյունավետ իրականացմանը, այսինքն՝ «Եվրոպական հարևանության քաղաքականութ-

յան դեմ պայքարի համագործակցություն ՀՀ-ի կողմից հաստատվել է բազմաթիվ երկրների և միջազգային կառույցների հետ, որոնց շարքը հեղինակի կարծիքով անհրաժեշտ է համալրել նաև Եվրոպական միության համապատասխան վերաբերական կառույցներով: Ընդօրինակելով ԵՄ անդամակցության ճանապարհին գտնվող երկրներից Խորվաթիայի Հանրապետության փորձը՝ ատենախոսության հեղինակն առաջարկում է համագործակցության համաձայնագրեր կնքել հանցավորության դեմ պայքարի ԵՄ վերաբերական կառույցներից ԵՎՐՈՊՈՒԼ-ի (Եվրոպական ոստիկանության գրասենյակ) և ԵՎՐՈԶԱՍԹ-ի (Եվրոպական դատական համագործակցության մարմին) հետ՝ միջազգային հանցավորության լուրջ տեսակների դեմ համատեղ պայքարելու նպատակով:

Հետազոտության արդյունքների հիման վրա ատենախոսը կատարել է հետևյալ եզրահանգումները.

1. Սկսած Եվրոպական միության ձևավորման սկզբնական ժամանակաշրջանից ԵՄ անդամ պետությունները զբաղված են եղել տնտեսական ինտեգրացիայի խնդիրներով, որոնք լուրջ չարաչափումների տեղիք տալով, հանգեցրել են հանցավորության աճին ամբողջ Եվրոպական միությունում: Ստեղծված իրավիճակում անդամ պետությունները դիմել են՝ հանցավորության դեմ պայքարի վերաբերական մեխանիզմներ մշակելու քաղաքականությանը:

2. Եվրոպական միությունը, որը որպես ընդհանուր կանոն ընձեռված չէ իրավասություններով քրեաիրավական ոլորտում, 1992թ. Մասստրիխտի և 1997թ. Ամստերդամի պայմանագրերի ընդունմամբ ձեռք է բերել որոշ իրավասություններ քրեաիրավական հարցերի կարգավորման առնչությամբ:

3. Ի լրումն ԵՄ հիմնադիր պայմանագրերով հաստատված իրավասությունների որոշակի հարաբերակցությանը՝ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՄ իրավունքը ազդեցություն ունի ազգային քրեական իրավունքի վրա և՛ հակառակը: Ուստի, ԵՄ իրավունքի և անդամ պետությունների քրեական իրավունքի միջև առկա է փոխադարձ ազդեցության կապ:

4. Երկար ժամանակ գերիշխող այն տեսակետը, թե քրեաիրավական ոլորտն ընդգրկված չէ ԵՄ քաղաքականության առաջնային ուղղություններում, քանի որ անդամ պետությունները պահպանում են իրենց ինքնիշխան իրավունքները քրեաիրավական ոլորտում՝ Եվրոպական միությանը փոխանցելով սահմանափակ իրավասություններ, փոխվել է Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի վերջին զարգացումների լույսի ներքո: Քրեաիրավական ոլորտում ձևավորվել է ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների նոր հարաբերակցություն. տարաբնույթ հիմնախնդիրների կարգավորումն անդամ պետությունների միջկառավարական համագործակցության մակարդակից փոխադրվել է ԵՄ վերաբերական մակարդակ:

5. «*Երկակի տեքստի մեխանիզմ*» բանաձևին, որը ենթադրում էր միևնույն հարցի կարգավորմանն ուղղված միաժամանակյա երկու տարբեր իրավական ակտերի ընդունում մեկը՝ վերաբերական, մյուսը՝ միջկառավարական համագործակցության հարթությունում, փոխարինել է «*կամրջ*» սկզբունքը, որը ենթադրում

ժը, չարաչափումների տեղիք տալով, նպաստել է միջազգային հանցավորության լուրջ տեսակների տարածմանը մի անդամ պետությունից մյուսը՝ խթանելով հանցավորության աճը: Մյուս կողմից, Եվրոպական միության վերաբերական մակարդակում ձևավորվող քրեաիրավական նոր քաղաքականության պայմաններում խստացվել են հատկապես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջոցները: Ուստի, Եվրոպական միության և Հայաստանի միջև ձևավորվող նոր առևտրատնտեսական կապերի պայմաններում, կա մտավախություն, որ միջազգային հանցավորության վտանգավոր տեսակները Եվրոպական միությունից կներթափանցեն Հայաստանի Հանրապետություն: Իսկ անդրասահմանային հանցագործությունները, ինչպիսիք են՝ զանգվածային ոչնչացման զենքի ու թմրանյութերի տարածումն ու տարանցումը, փողերի լվացումը, մարդկանց առևտուրը (թրաֆիքինգ), Հայաստանի Հանրապետության համար 2007թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ ճանաչվել են որպես անմիջական արտաքին սպառնալիքներ: Ավելին, այդ ռազմավարությամբ պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում նախատեսվել է Հայաստանի մասնակցությունը վերագային հանցագործությունների (այդ թվում՝ զանգվածային ոչնչացման զենքի ու դրա բաղադրամասերի, թմրանյութերի տարածման, մարդկանց առևտրի և այլն) դեմ միջազգային պայքարին: Միևնույն ժամանակ այդ ունյն ռազմավարությամբ խրախուսվում է Եվրոպական կառույցների, հատկապես՝ ԵՄ-ի և դրա անդամ պետությունների հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, ԵՄ-ի հետ բազմակողմ համագործակցության հետագա խորացումը և Հայաստանի ընդգրկումը ԵՄ-ի կողմից հովանավորվող տարածաշրջանային ծրագրերում («Եվրոպական հարևանության քաղաքականություն»), որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում Հարավային Կովկասում հարատև կայունության և համագործակցության մթնոլորտի հաստատման համար: Ավելին, 2011թ. ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրով նախատեսվում է այլ պետությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցության հաստատում կազմակերպված հանցավորության դեմ պայքարում: Նման պայմաններում ԵՄ-ի հետ առևտրատնտեսական կապերը պահպանելու, բայց նաև հասարակությանն ու պետությանը սպառնացող վտանգները կանխելու համար անհրաժեշտ է ապահովել Հայաստանի պաշտպանությունն ու ազգային անվտանգությունը, որպիսի երաշխիք նախատեսված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածով: Ուստի, ՀՀ Սահմանադրության, 2007թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և 2011թ. ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի պահանջներից է բխում միջազգային գործընթացների հետ համահունչ քայլելու, բայց նաև դրանց դրական և բացասական միտումներին համարժեք արձագանքելու նպատակով ազգային շահերը պաշտպանելու ռազմավարությունը:

Այսպիսով, հայտնաբերելով ԵՄ քրեաիրավական նոր քաղաքականությամբ պայմանավորված իրական վտանգներ, որոնք սպառնում են Հայաստանի Հանրապետությանը, ատենախոսության մեջ անհրաժեշտ և հրատապ է համարվում

բարձրացնել քրեախրավական հարցերով ԵՄ-ՀՀ համագործակցության մակարդակը, մասնավորապես՝ ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելով եվրոպականին՝ ԵՄ քրեախրավական ոլորտի հարմոնիզացիային համահունչ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Որպես ընդհանուր կանոն՝ քրեախրավական ոլորտում ԵՄ իրավասությունների բացակայության պայմաններում, շրջադարձային նշանակություն են ունեցել Արդարադատության դատարանի երկու նախադեպեր (թիվ C-176/03 և թիվ 440/05), որոնց ուժով Եվրոպական միությունն ընձեռվել է իրավասություններով քրեախրավական ոլորտում:

2. Ի լրումն նախադեպային իրավունքի զարգացումներին, 2007թ. Լիսաբոնի պայմանագրով նախատեսված կարգավորումները և ԵՄ վերաբեռնական մակարդակում ձևավորվող քրեախրավական նոր քաղաքականությունը փոխել են ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը քրեախրավական ոլորտում: Քրեախրավական հիմնախնդիրների կարգավորումն անդամ պետությունների միջկառավարական համագործակցության մակարդակից փոխադրվել է ԵՄ վերաբեռնական մակարդակ:

3. Քրեախրավական ոլորտի վերաբեռնական կարգավորումները Եվրոպական միությունում հանգեցրել են հարմոնիզացիայի գործընթացին, որով խստացվել է հատկապես կազմակերպված հանցավորության դեմ պայքարը: Առաջացել է կազմակերպված հանցավորության՝ Եվրոպական միությունից երրորդ երկրներ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետություն ներթափանցելու վտանգ հատկապես ԵՄ-ի և Հայաստանի միջև ձևավորվող նոր առևտրատնտեսական կապերի պայմաններում: Ուստի, առաջացել է քրեախրավական հարցերի շուրջ ԵՄ-ՀՀ համագործակցությունը զարգացնելու անհրաժեշտություն՝ ԵՄ իրավական դաշտին ՀՀ օրենսդրությունը մոտարկելու (համապատասխանեցնելու) և եվրոպական լավագույն փորձն ընդօրինակելու միջոցով:

4. ՀՀ միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ հանցավորության դեմ պայքարի ամենարդյունավետ միջոցներից մեկը հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման և պաշտպանության համակարգերի առկայությունն է, որոնք բացակայում են ՀՀ ներաբեռնական օրենսդրության մեջ, ինչը ԵՄ-ՀՀ համագործակցության կտրվածքով իրավական լուրջ բացթողում է:

5. ՀՀ միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման ու պաշտպանության համակարգերի արդյունավետ գործունեության գրավականը համագործակցություն հաստատելն է հանցավորության դեմ պայքարի համապատասխան մարմինների հետ, որը նույնպես բացակայում է Հայաստանի ազգային օրենսդրության մեջ, ինչը ԵՄ-ՀՀ փոխհարաբերությունների կտրվածքով նույնպես իրավական լուրջ բացթողում է:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները, որոնցում լուծում են ստացել երկար ժամանակ վիճահարույց համարվող հիմնահարցեր, կարող են արժեքավոր նշանակություն ունենալ, նախևառաջ, եվրոպական իրավունքի տե-

պայքարի տեղեկատվության փոխանակման հնարավորությունը ԵՄ համապատասխան վերաբեռնական կառույցների հետ:

Ատենախոսի կարծիքով հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակումը ՀՀ ազգային և ԵՄ վերաբեռնական կառույցների միջև արդյունավետ չի կարող իրականացվել, եթե այն ապահովված չլինի համապատասխան երաշխիքով՝ այդպիսի տեղեկատվության պաշտպանությամբ: Դա պայմանավորված է հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության մեջ առկա անհատական տվյալների գաղտնիության պահպանմամբ, ինչն ըստ թիվ 2006/960/ԱԵԳ շրջանակային որոշման բխում է 1981թ. «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատների պաշտպանության մասին» կոմիտեի և դրա կից Լրացուցիչ Արձանագրության պահանջներից: Դրանք, ի դեպ, Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել, սակայն մինչև վերջերս չէին վավերացվել, ինչը Եվրոպական հանձնաժողովի 2010թ. Հատկազորությամբ արձանագրվել էր որպես բացթողում: Ուստի, հեղինակը հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության պաշտպանության համակարգը ԵՄ իրավունքից ընդօրինակելուն և այն ազգային իրավական դաշտ ներմուծելուն ուղղված առաջընթաց քայլ է համարում Հայաստանի կողմից վերոնշյալ միջազգային փաստաթղթերի վավերացումը 2012թ.: Ավելին, ուսումնասիրելով ՀՀ միջազգային հարուստ փորձը հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության պաշտպանության բնագավառում, ատենախոսության հեղինակն այդպիսի տեղեկատվության պաշտպանությունը նաև ԵՄ-ի հետ հարաբերություններում ապահովելու նպատակով առաջարկում է ՀՀ օրենսդրությունը մոտարկել «Քրեախրավական հարցերով ոստիկանության և դատական մարմինների համագործակցության շրջանակներում մշակվող անհատական տվյալների պաշտպանության մասին» թիվ 2008/977/ԱԵԳ շրջանակային որոշմանը: Մասնավորապես, ատենախոսն առաջարկում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսել անհատական տվյալների պաշտպանության հնարավորությունը ՀՀ-ում: Ընդ որում, հեղինակի կարծիքով որպես ամենակարևոր երաշխիք է ծառայում հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության պաշտպանությունը ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև օտարերկրյա պետություններում և միջազգային կառույցներում, որոնց փոխանցվում է նման տեղեկատվություն:

Վերլուծելով միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի կողմից պատասխանատու մարմին նշանակելու պրակտիկան՝ ատենախոսության հեղինակն առաջարկում է նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսել հանցավորության դեմ պայքարի նպատակով փոխանցվող տեղեկատվության համար պատասխանատու մարմին:

ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը եվրոպականին հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման ու պաշտպանության ոլորտներում չի կարող արդյունավետ իրականացվել, եթե այն չլինի հանցավորության դեմ պայքարի ԵՄ վերաբեռնական կառույցների և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցության վրա, որը միջոցառման տեսքով նախատեսված է 2006թ. ԵՀԶ Գործողությունների ծրագրում: Ընդ որում, հանցավորու-

յան միջոցառումների ծրագրով նախատեսված գործունեության որոշակի ուղղությունները՝ միջազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման վերաբերյալ: Իսկ միջազգային հանցավորության այնպիսի տեսակները, ինչպիսիք են՝ զանգվածային ոչնչացման զենքի ու թմրանյութերի տարածումն ու տարանցումը, փողերի լվացումը, մարդկանց առևտուրը (թրաֆիքինգ), Հայաստանի Հանրապետության համար դեռևս 2007թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ ճանաչվել են որպես անմիջական արտաքին սպառնալիքներ: Ավելին, 2011թ. ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրով նախատեսվել է այլ պետությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցության հաստատման անհրաժեշտությունը կազմակերպված հանցավորության դեմ պայքարում: Ուստի, հեղինակի կարծիքով, առաջացել է՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցերում ԵՄ-ՀՀ համագործակցության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտություն, որի իրագործման համար անմիջական նշանակություն է ձեռք բերում եվրոպական իրավունքին ներդաշնակ օրենսդրության առկայությունը ՀՀ-ում: Այդ առումով հեղինակն առաջնային է համարում հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման օրենսդրական կարգավորումը, որը ԵՄ-ՀՀ վերաբերյալ համագործակցության վերոնշյալ փաստաթղթում նախատեսված է որպես հանցավորության դեմ պայքարի իրականացման ամենամիտաբան միջոցը: Մինչդեռ ՀՀ ներպետական օրենսդրության մեջ տեղեկատվության փոխանակման հարաբերությունները թերի են կարգավորված, իսկ հանցավորության դեմ պայքարի մասով ընդհանրապես կարգավորված չեն: Հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակման հնարավորությունը նախատեսված է միայն ՀՀ միջազգային պրակտիկայում՝ առանձին միջազգային կառույցների հետ Հայաստանի կնքած համաձայնագրերի շրջանակներում: Ըստ հեղինակի, այդպիսի տեղեկատվության փոխանակումը նաև ԵՄ վերաբերյալ կառույցների հետ իրականացնելու նպատակով ուղղակի անհրաժեշտություն է առաջանում ՀՀ օրենսդրությունը մոտարկել (համապատասխանեցնել) ԵՄ օրենսդրությանը, մասնավորապես՝ «ԵՄ անդամ պետությունների միջև տեղեկատվության և նյութերի փոխանակումը հեշտացնելու մասին» թիվ 2006/960/ԱՆԳ շրջանակային որոշմանը: Այն ԵՄ անդամ պետություններին հնարավորություն է ընձեռում փոխանակել տեղեկատվություն և նյութեր՝ քրեական հետապնդում և այլ գործողություններ կատարելու համար, ինչը տարածվում է նաև երրորդ երկրներից ստացված տեղեկատվության վրա: Այդ առումով առանցքային նշանակություն է ձեռք բերում հանցավորության դեմ պայքարի տեղեկատվության փոխանակումը ոչ թե ԵՄ անդամ պետությունների միջև, այլ ԵՄ անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև, որն ընդգրկված է ԵՄ-ի գործընկեր երրորդ երկրների շարքում: Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2008-2012թթ. Գործունեության միջոցառումների ծրագրի առաջնահերթություններով և թիվ 2006/960/ԱՆԳ շրջանակային որոշման դրույթներով՝ ատենախոսության հեղինակն առաջարկում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսել Հայաստանի ազգային մարմինների կողմից հանցավորության դեմ

ությունը գարգացման համար: Բացի այդ, քրեաիրավական ոլորտում ԵՄ և դրա անդամ պետությունների իրավասությունների նոր հարաբերակցությունը, դրանով պայմանավորված հարմոնիզացիայի գործընթացը և վերջինիս շրջանակներում ՀՀ իրավական դաշտը եվրոպականին մոտարկելուն ուղղված մեկնաբանություններն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագիրը, այլ նաև Եվրոպական միության կողմից մեկնարկված «Արևելյան գործընկերություն» նոր ծրագիրը և ապագա Ասոցիացման համաձայնագիրը կիրարկելու համար: Ավելին, ատենախոսության մեջ արված եզրահանգումներն ու առաջարկվող լուծումները կարող են հիմք հանդիսանալ ներպետական քաղաքականությունը զարգացնելու, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության 2008-2012թթ. Գործունեության միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև հաստատվելիք 2012-2013թթ. Միջոցառումների ցանկը և 2011-2013թթ. Հայաստանի Ազգային ինդիկատիվ ծրագիրն արդյունավետ կերպով կենսագործելու համար՝ Եվրոպական միության ներկայիս ինտեգրացիոն գործընթացներին համահունչ: Դրանք կարող են նպաստել նաև 2007թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և 2011թ. ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի՝ որպես պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման պետական քաղաքականության արդյունավետ իրականացմանը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք բաղկացած են ընդհանուր՝ յոթ ենթագլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և մեկ հավելվածից: Աշխատանքը շարադրված է 144 մեքենագիր էջի վրա:

Ներածությունը մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ատենախոսության նորմատիվ և տեսական, ինչպես նաև՝ մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

Առաջին գլուխը՝ «Քրեաիրավական ոլորտի պատմական զարգացումը Եվրոպական միության կայացման գործընթացում» վերտառությամբ, նվիրված է Եվրոպական միության քրեաիրավական ոլորտի ձևավորմանն ու պատմական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու բացահայտմանը:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Քրեաիրավական ոլորտի ձևավորման նախադրյալները Եվրոպական միությունում և դրա զարգացման առանձնահատկությունները» վերտառությամբ, լուսաբանվել են քրեաիրավական ոլորտի զարգացման հիմնախնդիրները Եվրոպական միությունում: Քրեաիրավական ոլորտի ձևավորումը Եվրոպական միությունում կապված է ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացների հետ, որոնք մի կողմից զարգացման մեծ հնարավորություններ են ընձեռում, սակայն մյուս կողմից պետություններին կանգնեցնում են նոր հիմնախնդիրների առաջ: Դրանց շարքում առանձնա-

նում է միջազգային հանցավորությունը, որը չէր կարող շրջանցել նաև Եվրոպական միությանը՝ սկսած դրա ձևավորման սկզբնական ժամանակաշրջանից, ինչը պայմանավորված էր Երկրորդ համաշխարհային պատերազմով առաջադրված նախադրյալների հետ: Պատերազմից հետո խաղաղության պահպանման նպատակով Եվրոպայի պետությունները ձեռնամուխ եղան տնտեսական և քաղաքական համագործակցությանը, որի նպատակն էր միավորել Եվրոպան: Սակայն այն պահից սկսած, երբ տնտեսական ինտեգրացիայի արդյունքում ձևավորվեց ընդհանուր տնտեսական տարածքը, որտեղ վերացվեցին ներքին սահմանները, ազատ տեղաշարժի իրավունքները չարաշահումների տեղիք տվեցին՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ, որպեսզի հանցավորությունն առավել հեշտությամբ տարածվեր մի անդամ պետությունից մյուսը: Արդյունքում, ամբողջ Եվրոպական միությունում գրանցված հանցավորության աճը ստիպեց անդամ պետություններին վերաբերական համագործակցության եզրեր փնտրելու նաև քրեաիրավական ոլորտում: Սկզբնական ժամանակաշրջանում անդամ պետությունները համագործակցում էին 1976թ. ստեղծված մի կառույցի՝ Trevi-ի շրջանակներում, որի աշխատանքային խմբերը կազմակերպում էին ոչ պաշտոնական հանդիպումներ, ուստի այդ ժամանակահատվածում որպես իրավական հիմք էին ծառայում Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները: Սակայն քանի որ Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները չէին վավերացվում բոլոր անդամ պետությունների կողմից, ապա դրանք կատարման համար պարտադիր էին դառնում միայն դրանք վավերացրած պետությունների համար: Քրեաիրավական ոլորտի զարգացման հաջորդ փուլում՝ 1992թ. Մասստրիխտի պայմանագրի ընդունումից հետո, հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները դարձել էին նոր ստեղծված ինտեգրացիոն միավորման՝ Եվրոպական միության քաղաքացիական և տեղ գտել ԵՄ երրորդ հիմքի ներքո: Այնուամենայնիվ, քրեաիրավական ոլորտի զարգացումն էական փոփոխություններ էր կրել միայն 1997թ. Ամստերդամի պայմանագրի ընդունումից հետո, որով խիստ սահմանափակ ոլորտների (վիզաների ռեժիմ, ապաստան, ներգաղթ և մարդկանց ազատ տեղաշարժ) կարգավորումը փոխանցվել էր Եվրոպական միության իրավասությանը:

Այսպիսով, Եվրոպական միության քրեաիրավական ոլորտը, անցնելով պատմական զարգացման որոշակի փուլեր, այնուամենայնիվ, շարունակում էր կարգավորվել ԵՄ անդամ պետությունների միջկառավարական համագործակցության շրջանակներում: Սակայն, մյուս կողմից, հանցավորության շարունակական աճը և դրա դեմ պայքարի ոչ բավարար մշակված քաղաքականությունը ստիպում էին ԵՄ անդամ պետություններին ձևավորելու հանցավորության դեմ պայքարի մեխանիզմներ վերաբերական մակարդակում: Այդ տեսանկյունից ատենախոսության հեղինակն առաջ է քաշում ԵՄ իրավունքի զարգացման դիմամիկայի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող մի հիմնահարց՝ Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը քրեաիրավական ոլորտում:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում «Քրեաիրավական ոլորտի կարգավորումը Եվրոպական միությունում Մասստրիխտի և Ամստերդամի պայմանագրերի

լու հնարավորություն, այնուամենայնիվ, հեղինակի կարծիքով քրեաիրավական ոլորտը կարգավորելու ԵՄ իրավասություններն ընդարձակվել են, ինչը մեծացրել է քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի աստիճանը Եվրոպական միությունում:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի ազդեցությունը Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի վրա» վերտառությամբ, ուսումնասիրության առարկա է դարձել ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի նշանակությունը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համար՝ եվրոպական լավագույն փորձն ու մոտեցումներն ընդօրինակելու և դրանք ՀՀ իրավական դաշտ ներմուծելու տեսանկյունից:

Հեղինակն այս հիմնահարցը կարևորում է նրանով, որ ներկայումս Եվրոպական միության և Հայաստանի միջև հարաբերություններում «Արևելյան գործընկերություն» նոր ծրագրի շրջանակներում նախատեսվում է ազատ առևտրի ռեժիմի հաստատում, որով, սակայն, անտեսվում է հնարավոր համագործակցությունը քրեաիրավական ոլորտում, ինչը լուրջ վտանգներ է պարունակում Հայաստանի համար քրեաիրավական հարթությունում: Եվրոպական միությունում ազատ տեղաշարժի իրավունքների վերապահմամբ ներքին սահմաններում վերացվել է սահմանային հսկողությունը, որի արդյունքում մարդկանց, ապրանքների, ծառայությունների և կապիտալի տեղաշարժը, չարաշահումների տեղիք տալով, նպաստել է միջազգային հանցավորության լուրջ տեսակների տարածմանը մի անդամ պետությունից մյուսը՝ խթանելով հանցավորության աճը: Այդ պատճառով, Եվրոպական միության վերաբերական մակարդակում ձևավորվող քրեաիրավական նոր քաղաքականության պայմաններում խստացվել են հատկապես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջոցները: Ուստի կա մտավախություն, որ միջազգային հանցավորության վտանգավոր տեսակները Եվրոպական միությունից կներթափանցեն Հայաստանի Հանրապետություն հատկապես ԵՄ-ի և Հայաստանի միջև ստեղծվելիք խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու, ինչպես նաև մուտքի արտոնագրերի դյուրացման պայմաններում: Այդ վտանգի կանխարգելման նպատակներից ելնելով՝ հեղինակը նախ ուսումնասիրել է ԵՄ-ՀՀ ներկայիս համագործակցությունը քրեաիրավական հարցերում, որի հիմքերը դրվել են դեռևս 2006թ., երբ Հայաստանը սկսել է առաջնորդվել «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրով: Դրա կիրարկումն ապահովող 2009-2011թթ. Միջոցառումների ցանկում և հաստատվելիք 2012-2013թթ. Միջոցառումների ցանկում ըստ ժամանակացույցի նախատեսված են՝ ՀՀ օրենսդրությունը եվրոպականին մոտարկելու ուղղությունները միջազգային հանցավորության վտանգավոր տեսակների դեմ պայքարում, ինչպես նաև համագործակցությունը ՀՀ և ԵՄ անդամ պետությունների դատական ու իրավապահ մարմինների միջև՝ տեղեկատվության ու փորձի փոխանակման նպատակով: Դա նշանակում է, որ քրեաիրավական հարցերի շուրջ ԵՄ-ի և ՀՀ-ի միջև արդեն իսկ հաստատված են համագործակցության որոշակի եզրեր, սակայն դրա կենսագործման ուղղությամբ ՀՀ իրավական դաշտում կոնկրետ քայլեր նախատեսված չեն: Զգալի առաջընթաց կարելի է համարել միայն ՀՀ Կառավարության 2008-2012թթ. Գործունեությամբ

զարգացման ամենակարևոր հիմքերը դրվել են 2007թ. Լիսաբոնի պայմանագրով, որով սահմանվում է հարմոնիզացիայի իրականացման ամենակարևոր երաշխիքը, այն է՝ անդամ պետությունների տարբեր իրավական համակարգերի ու ավանդույթների պահպանությունը: Խնդիրն այն է, որ, ընդհանուր առմամբ, հարմոնիզացիայի նպատակն է վերացնել անդամ պետությունների օրենսդրական համակարգերի միջև առկա տարբերությունները՝ վերստական մակարդակում հնարավոր հակասությունների առաջացումը կանխելու նպատակով՝ դրանով իսկ ստեղծելով յուրահատուկ ներդաշնակություն անդամ պետությունների ազգային իրավական համակարգերի միասնության մեջ: Սակայն հարմոնիզացիան՝ որպես բոլոր անդամ պետությունների համար միասնական չափանիշներ սահմանող բարդ գործընթաց, ինքնին, կարող է բարդություններ առաջացնել՝ անդամ պետությունների ազգային իրավական համակարգերի միջև առկա տարբերությունների հետևանքով: Ինչպես նշված է Հանձնաժողովի 2004թ. Կանաչ փաստաթղթում, անդամ պետությունների օրենսդրությունների միջև տարբերությունների առկայությունը լուրջ խնդիր է, քանի որ երկարատև ժամանակահատվածում ձևավորվել են պատմական, մշակութային և իրավական արժեքներ, որոնք խորը մխրճված են դրանց իրավական համակարգերում, և վերջիններիս մեջ կատարվող ցանկացած փոփոխություն կարող է հանգեցնել լուրջ հակասությունների: Այնուամենայնիվ, ատենախոսության հեղինակը համոզված է այն եզրակացության, որ ներկայումս ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի ընդլայնված շրջանակների և դրա իրականացման ամենակարևոր երաշխիքի առկայության պայմաններում, ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիան չի դադարում կրել Եվրոպական միությունում անընդմեջ տեղի ունեցող իրավական զարգացումների ազդեցությունը: Այն ինքնին դիմամիկ երևույթ է և ենթադրում է շարունակական գործընթաց ուստի, ըստ հեղինակի, միտված է նոր դրսևորումներ ձեռք բերելուն:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիան Եվրոպական միությունում Լիսաբոնի պայմանագրի փոփոխությունների լույսի ներքո» վերտառությամբ, ԵՄ քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի գործընթացը դիտարկվել է նոր իրավական զարգացումների, մասնավորապես՝ Լիսաբոնի պայմանագրով կատարված փոփոխությունների համատեքստում: Լիսաբոնի պայմանագրով առաջին անգամ ուղղակիորեն նախատեսվում է հարմոնիզացիան հանցագործությունների և պատժամիջոցների բնորոշումների առնչությամբ, մինչդեռ նախկինում Եվրոպական միության որևէ հիմնադիր պայմանագրով «հարմոնիզացիա» եզրույթը քրեաիրավական հարցերով ընդհանրապես չէր մատնանշվում: Այդ հասկացության ամրագրումը հավաստում է հարմոնիզացիայի՝ որպես վերստական կարգավորման ինքնուրույն գործընթացի կայացումը ԵՄ քրեաիրավական ոլորտում: Ի լրումն, Լիսաբոնի պայմանագրով նաև ընդլայնվել են հարմոնիզացիայի շրջանակները. Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդն ընձեռնվել են քրեաիրավական ոլորտում հանցագործություններ և պատժամիջոցներ սահմանելու իրավասությամբ, ինչը նախկինում բացակայում էր: Ճիշտ է, այդ հանցագործությունների ցանկը սպառիչ է, ընդ որում՝ հարաբերական իմաստով, քանի որ առկա է՝ այդ ցանկը նոր հանցատեսակներով համարել-

ընդունումից հետո» վերտառությամբ, ուսումնասիրության են ենթարկվել քրեաիրավական ոլորտի պատմական զարգացման ամենակարևոր երկու փուլեր, որոնք կապված են 1992թ. Մասստրիխտի և 1997թ. Ամստերդամի պայմանագրերի ընդունման հետ:

Տարիներ շարունակ վիճահարույց է եղել այն հարցը, թե արդյո՞ք Եվրոպական միության իրավասությունը պետք է տարածվի քրեական իրավունքի վրա, թե ոչ: Բազմաթիվ տարակարծությունների և միասնական կարծիքի բացակայության պայմաններում որոշ լուծումներ էին առաջադրվել Մասստրիխտի պայմանագրի ընդունմամբ, որով, սակայն, ուրվագծվում էր Եվրոպական միության իրավասությունների բավական մեղ շրջանակ, ինչը, նախևառաջ, դրսևորվում էր որոշումների ընդունման ընթացակարգում: Միակ իրավաբանորեն պարտադիր ակտերը կոմվենցիոն փաստաթղթերն էին որոնք արտացոլում էին միջկառավարական համագործակցությունը միջազգային կառույցների ներքո, ինչպես նաև՝ համատեղ դիրքորոշումներն ու համատեղ գործողությունները, որոնց իրավաբանորեն պարտադիր բնույթը վիճահարույց էր:

Մասստրիխտի պայմանագրով Եվրոպական միությանն ընձեռնված իրավասությունների սահմանափակ բնույթն արտացոլված էր նաև ԵՄ ինստիտուցիոնալ համակարգում: Եվրոպական հանձնաժողովն օժտված չէր նախաձեռնության իրավունքով որոշ քրեաիրավական հարցերի առնչությամբ, ինչպես որ անդամ պետությունները: Եվրոպական պառլամենտը քրեաիրավական հարցերով իրավասու էր տալ միայն կարծիք, որի հաշվի առնելը կամ հաշվի չառնելը թողնված էր Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ խորհրդի հայեցողությանը: Իսկ Ադառադալության դատարանն օժտված էր միայն քրեաիրավական ոլորտում ընդունվող կոմվենցիաները մեկնաբանելու, ինչպես նաև դրանց կիրառման շուրջ առաջացող վեճերի առնչությամբ որոշումներ ընդունելու իրավագործությամբ: Եվրոպական միության ինստիտուտներին ընձեռնված չափազանց սահմանափակ դերը քրեաիրավական հարցերի կարգավորման մեջ բխում էր՝ քրեաիրավական ոլորտում Եվրոպական միությանն իրենց ինքնիշխան իրավունքները փոխանցելու՝ անդամ պետությունների անհամաձայնությունից:

Իրավիճակը փոխվել էր միայն 1997թ. Ամստերդամի պայմանագրի ընդունմամբ, որով զգալիորեն ընդարձակվել էին Եվրոպական միության իրավասությունները քրեաիրավական ոլորտում: Ամստերդամի պայմանագրով հատկապես փոփոխվել էր ԵՄ ինստիտուտների դերը: Սահմանվել էր միաձայնությունը Խորհրդում՝ մեծացնելով վերջինիս դերը քրեաիրավական հարցերով իրավական ակտեր ընդունելիս: Ընդլայնվել էր նաև Եվրոպական պառլամենտի դերը, որից եզրակացություն ստանալը դարձել էր պարտադիր Խորհրդի կողմից իրավական ակտեր ընդունելիս: Այդուհանդերձ, Պառլամենտի դերն ինչ-որ առումով շարունակում էր մնալ սահմանափակ, քանի որ Պառլամենտից պարտադիր կերպով եզրակացություն ստանալը չէր պարտավորեցնում Խորհրդին ղեկավարվել դրա պահանջներով:

Չնայած Ամստերդամի պայմանագրով ներմուծված փոփոխություններին՝ քրեաիրավական ոլորտի կարգավորումը շարունակում էր լինել անդամ պետու-

յունների իրավասության առարկան՝ Եվրոպական միությանն ընձեռված սահմանափակ իրավասություններով: Պատճառն այն է, որ քրեական օրենսդրությունը մշտապես ընկած է եղել անդամ պետությունների իրավական ավանդույթների հիմքում: Եվ քանի որ դրանց օրենսդրությունների միջև առկա հակասություններն արտացոլում են հիմնական պատմական, քաղաքական և սահմանադրական տարբերությունները, ապա անդամ պետություններն իրենց քրեական իրավագործությունը միշտ համարել են իրենց ինքնիշխանության բաղկացուցիչ մասը՝ Եվրոպական միությանը փոխանցելով սահմանափակ իրավասություններ: Այնուամենայնիվ, ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ, Մասսոքիիստի և Ամստերդամի պայմանագրերի ընդունումից հետո քրեաիրավական ոլորտում ձևավորվել է Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների որոշակի հարաբերակցություն:

Երկրորդ գլուխը՝ «Եվրոպական միության իրավասությունների սահմանների հիմնախնդիրը քրեաիրավական ոլորտի համատեքստում» վերտառությամբ, նվիրված է քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության իրավասության սահմաններին և դրա ուսումնասիրության հարցում՝ ԵՄ իրավունքի և անդամ պետությունների քրեական իրավունքի փոխհարաբերության հիմնախնդրին ու Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքով ձևավորված սկզբունքներին:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Եվրոպական միության իրավունքի և անդամ պետությունների քրեական իրավունքի փոխհարաբերության հիմնախնդիրը» վերտառությամբ, հետազոտության է ենթարկվել քրեական իրավունքի ոլորտում Եվրոպական միության դերն ու սահմանները, ինչը երկար ժամանակ քննարկումների առարկա է եղել և հանգեցրել է իրար հակասող կարծիքների: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ ԵՄ Հիմնադիր պայմանագրերով և ոչ էլ ԵՄ երկրորդային օրենսդրությամբ Եվրոպական միությանը որևէ իրավասություն վերապահված չի եղել քրեաիրավական ոլորտում: Դա հաստատվել է Արդարադատության դատարանի պրակտիկայում: Սակայն ԵՄ իրավունքի և քրեական իրավունքի միջև բազմիցս տեղի է ունեցել փոխներգործություն, որը հանգեցրել է Արդարադատության դատարանի վճիռների և որոշումների՝ զգալի կազմով նախադեպային իրավունքի ձևավորմանը: Դա վկայում է այն մասին, որ քրեական իրավունքը ԵՄ իրավունքից և նպատակներից տարանջատված պահելը միշտ չէ, որ հնարավոր է եղել իրագործել անդամ պետությունների կողմից:

ԵՄ իրավունքի և անդամ պետությունների քրեական իրավունքի փոխհարաբերությունն ուսումնասիրելու նպատակով ատենախոսության հեղինակը վերածել է Արդարադատության դատարանի այնպիսի նախադեպեր, որոնցում բովանդակային հարստացում են ստացել Եվրոպական իրավունքի այնպիսի վերպետական սկզբունքներ, որոնց գերակայությունն անդամ պետությունների քրեական իրավունքի նկատմամբ արտացոլում է ԵՄ իրավունքի ազդեցությունը ազգային քրեական իրավունքի վրա: Դրանց շարքում առանձնանում է *համաչափության սկզբունքը*, որի առնչությամբ Արդարադատության դատարանը *Casati* գործով հաստատել է, որ, չնայած քրեաիրավական դաշտի համար դեռևս շարունակում

տության դատարանը, տրանսպորտային անվտանգությունը դիտարկելով ավելի բարձր արժեք, քան հանցավոր արարքների քրեականացման նպատակը, կրկին անվավեր էր ճանաչել Խորհրդի շրջանակային որոշումը՝ վերահաստատելով ԵՄ իրավասությունների առկայությունը քրեաիրավական ոլորտում:

Թեպետ ԵՄ իրավասությունների առկայությունը քրեաիրավական ոլորտում հաստատվել է դեռևս միայն շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտային անվտանգության տեսանկյունից, այնուամենայնիվ, հեղինակը եզրակացնում է, որ ներկայումս Եվրոպական միությունն օժտված է իրավասությունների ավելի մեծ ծավալով քրեիրավական ոլորտում: Դա ենթադրում է քրեաիրավական ոլորտի կարգավորման փոխադրումը ազգային մակարդակից ԵՄ վերպետական մակարդակ: Ժամանակակից իրավական զարգացումների լույսի ներքո փոխվել է Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունների հարաբերակցությունը քրեաիրավական ոլորտում, ինչը Եվրոպական միությունում ձևավորել է քրեաիրավական հարաբերությունների կարգավորման նոր հարթություն և նոր որակ:

Երրորդ գլուխը՝ «Քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիան Եվրոպական միությունում և դրանից բխող մոտեցումների կիրառելիությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, նվիրված է քրեաիրավական ոլորտի վերպետական կարգավորմանը և դրա ազդեցությանը ԵՄ-ի հետ համագործակցող երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի վրա:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի առաջացումը Եվրոպական միությունում» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել ԵՄ քրեաիրավական ոլորտի վերպետական կարգավորման, այսինքն՝ հարմոնիզացիայի գործընթացի ձևավորման ու զարգացման առանձնահատկություններին: Հարմոնիզացիան (ներդաշնակեցումը), որը ենթադրում է ԵՄ վերպետական կառույցների կողմից որոշակի ոլորտների առնչությամբ, բոլոր անդամ պետությունների համար միասնական չափանիշների և նորմերի սահմանում, ի սկզբանե իրականացվել է տնտեսական ինտեգրացիայի ոլորտում, որտեղ անդամ պետությունները ԵՄ-ին են փոխանցել իրենց ինքնիշխան իրավունքները: Քրեաիրավական դաշտի վրա այն նախկինում չի տարածվել: Քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի առաջին փորձերը կատարվել են 1992թ. Մասսոքիիստի պայմանագրի ընդունմամբ, որով նախատեսվում էին քրեաիրավական դաշտը հարմոնիզացնող իրավական ակտերի ընդունում, որոնք, սակայն, լրիվ չէին հարմոնիզացնում քրեաիրավական ոլորտը, քանի որ պարտադիր չէին անդամ պետությունների համար: Այդպիսիք էին, օրինակ՝ կոնվենցիաները և համատեղ գործողությունները: 1997թ. Ամստերդամի պայմանագրի ընդունմամբ կատարվել է քրեաիրավական ոլորտի հարմոնիզացիայի հաջորդ քայլը, որով քրեաիրավական դաշտը հարմոնիզացնող իրավական ակտերի շարքը համալրվել էր շրջանակային որոշումներով, որոնք պարտադիր էին անդամ պետությունների համար: Այդուհանդերձ, Ամստերդամի պայմանագրով հարմոնիզացվել էր ոչ թե ամբողջ քրեաիրավական դաշտը, այլ դրա մի որոշակի հատվածը՝ ընդգրկելով սահմանափակ թվով հանցագործությունների դեմ պայքար: Հարմոնիզացիայի գործընթացի

առումով, հանգեցրել էր օրինաստեղծ սուբյեկտների հակասական իրավական գործելակերպին: Գ-րա վերջակետն են հանդիսացել Արդարադատության դատարանի երկու նախադեպեր (թիվ C-176/03 և թիվ 440/05), որոնք շրջադարձային նշանակություն են ունեցել Եվրոպական միության քրեաիրավական ոլորտի զարգացման պատմության մեջ: Առաջինը *Commission v. Council* գործն է, ըստ որի Հանձնաժողովի կողմից ներկայացվել էր առաջարկ՝ Հռոմի պայմանագրի 175(1) հոդվածի հիման վրա քրեականացնել շրջակա միջավայրի դեմ ուղղված հակաիրավական արարքները հրահանգ ընդունելու միջոցով: Հակառակ դրան՝ ԵՄ Խորհուրդը, առաջնորդվելով քրեաիրավական ոլորտում ԵՄ իրավասությունների բացակայության ընդհանուր կանոնով, այդ նույն նպատակով Մասատրիխտի պայմանագրի 29-րդ հոդվածի հիման վրա ընդունել էր շրջանակային որոշում: Խորհրդի քայլին հետևել էր Հանձնաժողովի կողմից Արդարադատության դատարան ներկայացված հայցն ընդդեմ Խորհրդի՝ վերջինիս ընդունած շրջանակային որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Արդարադատության դատարանն այս գործով նշել էր, որ չնայած Մասատրիխտի պայմանագրի 29-րդ հոդվածը նույնպես թույլատրում էր շրջակա միջավայրի պաշտպանությունն իրականացնել քրեաիրավական միջոցներով, այնուամենայնիվ, 29-րդ հոդվածի վրա տարածվում էր այդ նույն պայմանագրի 47-րդ հոդվածի սահմանափակումը, որի համաձայն Մասատրիխտի պայմանագրի որևէ դրույթ չէր կարող ազդեցություն ունենալ Եվրոպական համայնքները հիմնադրող և դրանց հաջորդող պայմանագրերի ու դրանք փոփոխող կամ լրացնող ակտերի վրա: Հիմնվելով Մասատրիխտի պայմանագրի 47-րդ հոդվածի վրա՝ Արդարադատության դատարանն անվավեր էր ճանաչել Խորհրդի շրջանակային որոշումը:

Գ-րանով հաստատվել է Եվրոպական միության իրավասությունների առկայությունը քրեաիրավական ոլորտում՝ փոխելով եվրոպական իրավունքի տեսության մեջ կարծրացած և երկար ժամանակ գերիշխող այն տեսակետը, որ Եվրոպական միությունն օժտված չէ իրավասություններով քրեաիրավական ոլորտում: Եվրոպական միության իրավասության սահմանները քրեաիրավական ոլորտում առավել ընդլայնվել են Եվրոպական հանձնաժողովի 2006թ. մայիսի Հաղորդագրությամբ, որով ներդրվել է «կամրջի սկզբունքը»: Այն ենթադրում է որոշակի իրավական հիմքի վրա կարգավորող հարցն այլ իրավական հիմքի վրա փոխադրելը: Հանձնաժողովը որպես այդպիսի «կամրջ» ընտրել էր Մասատրիխտի պայմանագրի 42-րդ հոդվածը, որը որոշակի ոլորտների առնչությամբ Մասատրիխտի պայմանագրի 29-րդ հոդվածը կիրառելու փոխարեն թույլատրում էր կիրառել Հռոմի պայմանագրի IV գլխի նորմերը՝ նախատեսելով ԵՄ քրեական իրավասության առկայության հնարավորությունը նաև այլ ոլորտներում՝ ի լրումն շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի:

Արդարադատության դատարանը վերահաստատել է իր դիրքորոշումը երկրորդ՝ *Ship-source pollution* դատական գործով, ըստ որի կրկին Հանձնաժողովը հայց էր ներկայացրել Արդարադատության դատարան Խորհրդի՝ նավերից կատարվող արտանետումներով ախտոտման համար քրեական պատիժներ նախատեսող շրջանակային որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Արդարադա-

են պատասխանատու լինել անդամ պետությունները, այնուամենայնիվ, չպետք է նախատեսվեն այնպիսի պատժամիջոցներ, որոնք այնքան անհամաչափ են արարքի ծանրությանը, որ խոչընդոտում են ազատ տեղաշարժի իրավունքների իրականացումը:

Արդարադատության դատարանը համանման մոտեցում է ցուցաբերել նաև *Skaniavi* գործով, որով Գերմանիայում առանց գերմանական վարորդական իրավունքի վկայականի ավտոմեքենա վարելու համար նշանակված քրեական պատիժը Արդարադատության դատարանի կողմից որակվել էր որպես կատարված արարքի ծանրությանը անհամաչափ պատժամիջոց:

Արդարադատության դատարանը մեկ քայլ առաջ է գնացել *Bickel and Franz* միացյալ գործում՝ դիտարկելով ԵՄ իրավունքի գերակայությունը ազգային քրեական իրավունքի նկատմամբ մեկ այլ՝ *խտրականության բացառման սկզբունքի* տեսանկյունից: Ըստ այդ գործի Իտալիայի վարչատարածքային միավորներից մեկում հակաիրավական արարքներ կատարած Ավստրիայի և Գերմանիայի քաղաքացիներին մերժել էին գերմաներենը որպես դատավարության լեզու ընտրելը՝ տվյալ վարչատարածքային միավորում մշտական բնակություն չունենալու հիմքով: Արդարադատության դատարանը, հիմնվելով Եվրոպական համայնքների հիմնադրման պայմանագրով սահմանված խտրականության բացառման սկզբունքի վրա, հաստատել էր ԵՄ իրավունքի գերակայությունն ազգային քրեական իրավունքի նկատմամբ:

Անդամ պետությունների քրեական իրավունքի նկատմամբ ԵՄ իրավունքի գերակայությունը սահմանելու նպատակով Արդարադատության դատարանը *Amsterdam Bulb* գործով համարել է գերակայող վերապետական սկզբունքները՝ ներդնելով *ԵՄ իրավունքի արդյունավետության սկզբունքը*: Այդ սկզբունքի համաձայն, ԵՄ իրավունքի խախտման համար կոնկրետ պատասխանատվության միջոց նախատեսող վերապետական նորմերի բացակայության պարագայում, անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ԵՄ իրավունքի կիրառումն ու արդյունավետությունն ապահովելու համար: Այդ նույն սկզբունքը Արդարադատության դատարանը վերահաստատել է *Greck Maize* գործով, ըստ որի ԵՄ անդամ պետությունների հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գյուղատնտեսական հարկը չվճարելու համար ԵՄ օրենսդրության մեջ համապատասխան պատժամիջոցի բացակայության պայմաններում, անդամ պետությունները պետք է ձեռարկեին համապատասխան միջոցներ ԵՄ իրավունքի արդյունավետությունն ապահովելու համար: Ավելին, Արդարադատության դատարանը տվյալ սկզբունքից բխեցրել է նաև մեկ այլ՝ *համանմանության սկզբունքը*, որի համաձայն ԵՄ բյուջեի դեմ ուղղված խարդախությունը եթե պատժելի էր ազգային մակարդակում, ապա պետք է համանման ձևով պատժելի լիներ նաև վերապետական մակարդակում: Արդարադատության դատարանն ավելի է ընդլայնել համանմանության սկզբունքի բովանդակությունը *Nunes and de Matos* միացյալ գործում, ըստ որի Պորտուգալիայի երկու քաղաքացիներ մեղադրվել էին՝ մասնագիտական որակավորում ձեռք բերելու նպատակով Եվրոպական սոցիալական ֆոնդից ֆինանսավորում ստանալու համար կաշառակերության մեջ:

Արդարադատության դատարանը նշել էր, որ անդամ պետությունները քրեաիրավական միջոցներով պետք է ապահովեն ԵՄ իրավունքի արդյունավետությունը ոչ միայն այն դեպքերում, երբ ԵՄ օրենսդրության մեջ բացակայում են համապատասխան պատժամիջոցներ, այլ նաև այն դեպքերում, երբ դրանք առկա են, սակայն իրենց բնույթով քաղաքացիաիրավական են:

Ազգային քրեական իրավունքի նկատմամբ ԵՄ իրավունքի գերակայությունը հաստատելու համար Արդարադատության դատարանը *Pupino* գործում զարգացրել է *հավատարմության սկզբունքը*, համաձայն որի անչափահաս աշակերտների նկատմամբ հոգեբանական բռնություն գործադրելու համար ազգությամբ իտալացի ուսուցչուհու դեմ հարուցված քրեական գործով առաջացել էր տարածայնություն ԵՄ վերաբերյալ կամ ազգային իրավական ակտը կիրառելու հարցում: Արդարադատության դատարանը նշել էր, որ Եվրոպական միության առջև դրված խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար անդամ պետությունները պետք է առաջնորդվեն հավատարիմ համագործակցության սկզբունքով՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները ԵՄ իրավունքով ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

Ատենախոսության հեղինակը Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում հիմնավորել է նաև ԵՄ իրավունքի և ազգային քրեական իրավունքի փոխհարաբերության մյուս կողմը: Այսպես, *Berlusconi and others* միացյալ գործում կեղծ հաշվապահական փաստաթղթեր ներկայացնելու համար Իտալիայի քրեական օրենսգրքի հին խմբագրությամբ նախատեսված էր ավելի խիստ պատիժ, քան դրա նոր փոփոխություններով: Միևնույն արարքի համար ավելի խիստ պատիժ էր նախատեսված նաև ԵՄ համապատասխան վերաբերյալ ակտով, որը Արդարադատության դատարանի կողմից ճանաչվել էր որպես ազգային իրավունքով ամրագրված *հետադարձ ուժի սկզբունքին* հակասող: Դրանով հաստատվել էր ազգային քրեական իրավունքի ազդեցությունը ԵՄ իրավունքի վրա, ինչը հետագայում վերահաստատվել էր մեկ այլ՝ *Pfeiffer and others* միացյալ գործում:

Ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ թեպետ Եվրոպական միության ո՛չ առաջնային և ո՛չ էլ երկրորդային օրենսդրությունն ուղղակիորեն չեն նախատեսում ԵՄ վերաբերյալ իրավունքի և ազգային քրեական իրավունքի փոխհարաբերված ազդեցություն, այդուհանդերձ, Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը փաստում է այդպիսի ազդեցության առկայությունն ու երկակի բնույթը: Այդպիսի փոխներգործությունը հնարավորություն է տալիս պարզելու, թե իրավասությունների ի՞նչ ծավալով է օժտված Եվրոպական միությունը քրեական իրավունքի ոլորտում, մասնավորապես՝ հանցավորության դեմ պայքարում: Ընդ որում, ատենախոսը քրեաիրավական ոլորտը դիտարկում է ոչ թե որպես առանձին իրավունքի ճյուղ իրավունքի դասական ընկալման իմաստով, այլ որպես առանձին բնագավառ, հարթություն, որտեղ հարաբերվում են Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Եվրոպական միության իրավասության սահմանները քրեաիրավական ոլորտում» վերտառությամբ, վերլուծության է են-

թարկվել ԵՄ իրավասությունների առկայությունը քրեաիրավական ոլորտում՝ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Ըստ հեղինակի քրեաիրավական ոլորտում ԵՄ իրավասությունների վերաբերյալ տեսության մեջ ձևավորվել են երկու հակադիր կարծիքներ: Գիտնականների մի խումբ գտնում է, որ ԵՄ անդամ պետությունները միավորվել են՝ հետապնդելով տնտեսական ինտեգրացիայի նպատակներ, իսկ քրեական իրավունքի ոլորտի վրա ավելի շատ տարածվում է անդամ պետությունների ինքնիշխանությունը: Գիտնականների մյուս մասն այն կարծիքին է, որ ԵՄ իրավակարգի ամբողջականությունն ապահովելու համար Եվրոպական միությունը պետք է օժտված լինի նաև քրեաիրավական հարցերում միջամտելու լիազորություններով: Ելնելով հարցի օրենսդրական կարգավորման տեսանկյունից՝ ԵՄ հիմնադիր պայմանագրերն այս հարցում պահպանում են լռություն: Դրանցում բացակայում է քրեաիրավական ոլորտում ԵՄ իրավասությունն *ուղղակիորեն* սահմանող որևէ նորմ:

Եթե ԵՄ օրենսդրական հարթության վրա հստակ չեն ուրվագծվում քրեաիրավական ոլորտում Եվրոպական միության և դրա անդամ պետությունների իրավասությունները, ապա գործնականում դրանք մինչև վերջերս վիճարկվում էին օրինաստեղծ սուբյեկտների կողմից: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Եվրոպական հանձնաժողովը և ԵՄ խորհուրդը անընդմեջ առարկում էին միմյանց՝ քրեաիրավական հարցերով ընդունած իրավական ակտերի դեմ՝ դրանով իսկ վիճարկելով Եվրոպական միության իրավասությունների առկայությունը քրեաիրավական ոլորտում: Տվյալ իրադրության մեջ Հանձնաժողովի և Խորհրդի կողմից՝ քրեաիրավական հարցերով օրենսդրական գործիքներից օգտվելու պրակտիկական հանգեցրել էր *«երկակի տեքստի մեխանիզմը»* բանաձևի ներդրմանը: Այս բանաձևի կիրառման պայմաններում, հակաիրավական արարքների պատժելիությունը սահմանելու նպատակով ընդունվում էին հրահանգներ (դիրեկտիվներ) և կանոնակարգեր, սակայն այդ արարքների համար պատասխանատվության միջոցներ նախատեսվում էին ոչ թե այդ հրահանգներով կամ կանոնակարգերով, այլ գուցահեռաբար ընդունվող առանձին իրավական ակտերով՝ շրջանակային որոշումներով: Ուստի, *«երկակի տեքստի մեխանիզմը»* ենթադրում էր միևնույն հարցի կարգավորման կապակցությամբ գուցահեռաբար երկու տարբեր իրավական ակտերի ընդունում, մեկը՝ վերաբերյալ, մյուսը՝ միջկառավարական համագործակցության հարթությունում: Սակայն, որպես ընդհանուր կանոն, Եվրոպական միությունն օժտված չէր իրավասություններով քրեաիրավական ոլորտում: Հետևաբար, Եվրոպական հանձնաժողովը տնտեսական ինտեգրացիայի ոլորտում ընդունվող իրավական ակտով՝ հրահանգով, իրավասու չէր նախատեսել նաև քրեական պատասխանատվության միջոցներ: Անդամ պետությունների ինքնիշխան իրավունքների պահպանման պայմաններում, քրեական պատասխանատվության այդ միջոցները նախատեսվում էին արդեն քրեական իրավունքի ոլորտում ընդունվող իրավական ակտերով՝ Խորհրդի շրջանակային որոշումներով:

Հեղինակի կարծիքով *«երկակի տեքստի մեխանիզմը»* բանաձևը, որն առաջացնում էր անհարկի բարդություններ օրինաստեղծ գործունեության մեջ՝ ժամանակի տնտեսման և որոշումների ընդունման գործընթացի արդյունավետության